

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԱԼԱՀ ԱԴ – ԴԻՆԻ
ՇՆՈՐՀԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i69.180*

ԱՄՓՈՓՈՒՄ

Երուսաղեմում դեռևս քրիստոնեության հաստատման առաջին դարերում էին կառուցվել հայկական վանքերն ու եկեղեցիները: 4-5-րդ դարերում Ս. Հակոբ վանքի կառուցումից հետո հայ եկեղեցական դասը իր հոգևոր իշխանությունը տարածեց Սիրիայի, Պաղեստինի, Եգիպտոսի հայ բնակչության վրա: 5-րդ դարում Հայ Առաքելական եկեղեցին ընդդիմացավ Բյուզանդական կայսրության փորձերին, որը ցանկանում էր «եկեղեցիների միասնության» քողի տակ զրկել Հայաստանի բնակչությանը քաղաքական ինքնուրույնությունից, որը չէր ընդունում Քաղկեդոնի ժողովի որոշումները: Արդեն 6-րդ դարում հակաքաղկեդոնական պայքարի արդյունքում Ս. Հակոբ տաճարի հիմքի վրա ձևավորվեց Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը: Այս շրջանում Հայոց եկեղեցին Երուսաղեմում ենթարկվում էր մեծ ճնշումների և քաղաքի հայ բնակչության մի մասը ստիպված էր գաղթել Եգիպտոս: Միայն արաբական նվաճումներից հետո հայերը նորից վերադարձան Երուսաղեմ:

Ինչպես փաստում են Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Դիվանում պահպանվող մի շարք արաբերեն ծեռագրեր, վավերագրեր ու փաստաթղթեր, իսլամի հիմնադիր Մուհամմադ մարգարեն քաղաքի հայ բնակչությանն է շնորհել մի պայմանագիր, որով երաշխավորվում էին ու հաստատվում հայոց իրավունքները Երուսաղեմի մի շարք սրբավայրերի նկատմամբ: Հետագայում այս պայմանագիրը նոր դաշնագրով հաստատեց Օմար իբն ալ-Խատտաբ խալիֆան (634-644), երբ 637թ. գրավեց քաղաքը (**Սավալանյան Տ., 1931**): Իսկ խաչակրաց

արշավանքների ընթացքում արդեն Այյուբյան հարստության հիմնադիր Սալահ ադ-Դինը (1171-1193), երբ մտավ Երուսաղեմ, վերահաստատեց վերոհիշյալ դաշնագրերը՝ անվտանգություն խոստանալով բնակչությանը: Այս դաշնագիրը հետագա դարերում մեծ դեր է խաղացել ամրագրելու հայոց իրավունքները մի շարք եկեղեցիների նկատմամբ, որոնք վիճաբանության առարկա էին դարձել քաղաքի հայ և քրիստոնյա այլ համայնքների (հույն, վրացի) միջև: Օսմանյան կայսրության սուլթաններն էլ իրենց հերթին Սալահ ադ-Դինի դաշնագրի հիմքի վրա ճանաչեցին հայոց իրավունքները Երուսաղեմի մի շարք կրոնական սրբությունների վրա:

Այսպես. հոդվածը վերոհիշյալ պայմանագրերի վերաբերյալ մի ուսումնասիրություն է, իհարկե, Սալահ ադ-Դինի պայմանագրի շեշտադրմամբ՝ շարադրված հիմնականում հայ մատենագրության մեջ առկա պատմական նյութերի մի շարք ուսումնասիրությունների, Երուսաղեմի Հայ Պատրիարքության Դիվանում պահվող արաբատառ ձեռագրերի հիմքի վրա, որոնցով փորձ է արվել համապարփակ ձևով ներկայացնել այդ պայմանագրի խաղացած մեծ դերը Երուսաղեմի հայկական համայնքի կյանքում: Վերոհիշյալ թեման հրատապ է հատկապես այժմ, երբ Իսրայելի պետական իշխանությունների կողմից իրականացվող ճնշումների արդյունքում վտանգված է հայոց բազմադարյան ներկայությունը Երուսաղեմում և խախտված են միջազգային իրավունքի փորձերի՝ խլելու Հայոց Պատրիարքայանի կրոնական և պատմական նշանակության սեփականությունը, որն անբաժանելի մասն է հայկական և քրիստոնեական ժառանգության:

Բանալի բառեր և արտահայտություններ. Սալահ ադ-Դին, Օսմանյան պետության սուլթաններ, Երուսաղեմի հայկական համայնք, խաղաղության պայմանագիր, հայ-արաբական հարաբերություններ, կյանքի անվտանգություն, Ալլահի պաշտպանություն, հայերի իրավունքներ, Երուսաղեմի սրբավայրեր, հայոց պատրիարք:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սուրբ երկրում հայերի բնակեցման պատմությունը սկիզբ է առնում դեռևս 1-ին դարից, հայկական մատենագրության մեջ հիշատակվում է, որ քրիստոնեության հաստատման վաղնջական ժամանակներից հայ ուխտավորներ էին այցելում Երուսաղեմ: Ակնհայտաբար 7-րդ դարում հայոց Անաստաս վարդապետը իշխան Համազասպ Կամսարականի խնդրանքով այցելել է Երուսաղեմ և գրի առել տեղի հայկական վանքերի ցուցակը, որոնց թիվը հասնում էր յոթանասունի (**Աղավնունի Մ., 1930; Azarya V., 1984**): Պարզ է դառնում, որ դեռևս հայոց Տրդատ արքայի (287-330) թագավորության և Ս. Գրիգոր Լուսավորչի (302-326) հայրապետության օրոք հայոց մեծամեծները վանքեր են կառուցել Երուսաղեմում, և հայ ուխտավորների բազմությունը հաճախ էր այցելում այդ սրբավայրերը և բնակություն հաստատում այնտեղ: Ընդ որում, քաղաքի մի շարք սրբավայրերի կառուցմանը, ըստ հայկական ազգային ավանդության, բյուզանդական կայսր Կոստանդինոսի և նրա մոր՝ Հելինեի հետ մասնակից է եղել նաև հայոց Տրդատ թագավորը (**Սավալանյան Ս., 1931; Azarya V., 1984**):

Բոլոր հիշատակությունները փաստում են, որ հայերը գործունե մասնակցություն են ունեցել Երուսաղեմի քաղաքական, տնտեսական, մշակութային և հոգևոր կյանքում (Azarya V., 1987):

Ըստ Երուսաղեմի հայոց պատմության գիտակ Ս. Սավալանյանի՝ Մուհամմադ մարգարեն Երուսաղեմի հայոց պատրիարք Աբրահամին է շնորհել մի պայմանագիր, որով քաղաքի հայ համայնքի իրավասության տակ են անցել մի շարք սրբավայրեր՝ Ս. Հակոբ եկեղեցին, Ս. Հարություն տաճարը, Ձիթենյաց վանքը և այլն, որոնք հետագայում վեճի առարկա դարձան հայ և հույն եկեղեցիների միջև: Աբրահամ պատրիարքը իր հերթին ևս պարտավորվեց հարկեր վճարել մուսուլմանական համայնքին: Ըստ Ս. Սավալանյանի, Երուսաղեմի պատրիարքական դիվանատանը չկա հիշյալ հավատարմագիրը, որի փոխարեն հին թղթի վրա գրված մի հրովարտակ կա, որ «երեսուն վկաների ստորագրությունը կկրի» (**Սավալանյան Ս., 1931**):

Բացի Ս. Սավալանյանի գրքում զետեղված Մուհամմադ մարգարեի անունով վերոհիշյալ պայմանագրից, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Դիվանում Մուհամմադ մարգարեի անունով պահպանվում են մոտ 220 ձեռագիր, որոնցից մեր կողմից ուսումնասիրության է ենթարկվել հնագույն ձեռագիր-պայմանագիրը: Այն իր բովանդակությամբ և բառային ձևակերպումներով բավականին տարբերվում է վերոհիշյալ հրովարտակից՝ առկա Ս. Սավալանյանի գրքում և նմանություններ ունի Եմենի Նաջրան քաղաքի բնակչությանը Մուհամմադի կողմից տրված պայմանագրի հետ, որն առկա է Նեստորականների անանուն պատմության մեջ (**Sher A., 1918**):

Պատրիարքության դիվանում պահվող Երուսաղեմի հայ բնակչությանը Մուհամմադի անունով պայմանագրում նշվում է, որ այն Ալլահի Մարգարեի պատվերով գրել է ալ- Հարիս իբն Քաաբան որպես նախագգուշացում և ապավինում Բարձրյալ Ալլահի հովանավորությանը՝ ուղղված քրիստոնյա մասնավորապես Երուսաղեմի հայկական համայնքի և նրա հետևորդներին՝ ասորիներին, ղպտիներին և եթովպացիներին: Պայմանագիրը կնքվում էր բոլոր մուսուլմանների անունից, որոնք բնակվում են երկրագնդի արևելքում և արևմուտքում: Հիշատակվում են այն եկեղեցիների և վանքերի անունները, որոնք շնորհվում էին հայկական համայնքին. Ս. Հակոբ եկեղեցին, Ս. Հարություն տաճարը իր ներսով և դրսով, Բեթղեհեմի եկեղեցին և Ս. Քաղաքի մյուս սրբավայրերը: Մարգարեն խոստանում էր իր զորքերով, օգնականներով պաշտպանել հայ բնակչությանը, հեռու լինեն, թե մոտիկ, նրանց վանքերն ու եկեղեցիները, քանի որ «նրանց եղբայրն իմ ազգի մեջ է», հավանաբար նկատի ունենալով, Մուհամմադ մարգարեի ջերմ վերաբերմունքը քրիստոնյա, մասնավորապես հայկական համայնքի հանդեպ: Մուսուլմանները չպետք է միջամտեին նրանց ներքին գործերին: Հայերը պատրաստվում էին վճարել 40 դիրհեմ: Գլխահարկից ազատվում էին խոշոր առևտուր վարողները, որոնք մթերք պիտի վճարեին մուսուլմանական գանձատանը (**Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Դիվանի Իժ //131 ձեռագիր**):

Պայմանագրում առկա են նաև մի շարք պայմաններ, որոնք վերաբերվում են մուսուլմանի հետ քրիստոնյա կնոջ ամուսնությանը և նրա իրավունքներին, մուսուլմանների դեմ պատերազմի դեպքում քրիստոնյաների վարվելակերպին և այլն: Պայմանագրի վերջում բերվում են 36 վկաների անունները: Փաստաթուղթը չունի թվական: Ի դեպ, օտարազգի հեղինակներից Յ. Շիլտբերգերը իր ուղեգրության 46-րդ գլխում, հիմք ունենալով Մուհամմադի մասին հայկական միջավայրում տարածված ավանդույթները, հիշատակում է, որ Եգիպտոսի ճանապարհին գտնվող գյուղերից մեկում հայ քահանան գուշակում է, որ օտար առևտրականների հետ ճամփորդող պատանին դառնալու է ապագա Մահմեդը և դիմելով պատանուն ասում է, որ նա պիտի դառնա մեծ ուսուցիչ և հիմնի նոր հավատ հեթանոսների մեջ, իր զորությամբ ճնշի նաև քրիստոնյաներին: Ուստի խնդրում է նա այդ պատանուն, որ խաղաղության մեջ պահի հայ ազգին: Պատանին խոստանում է այդպես վարվել (**Աբգարյան Գ., 1997**): Մուհամմադ մարգարեի՝ Երուսաղեմի հայկական համայնքին տրված պայմանագիրը մուսուլմանա- հայկական շփումների ամենավաղ ապացույցն է և մատնանշում է հայերի՝ մուսուլմանների հետ փոխհամաձայնության գալու առաջին փուլը (**Dadoyan S., 2013**):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում ուսումնասիրության է ենթարկվել Երուսաղեմի հայկական համայնքին Սալահ ադ-Դինի շնորհած պայմանագիրը մատենագիտական նյութերի, ուսումնասիրությունների, ձեռագրերի հիմքի վրա, որոնք համադրվել, համեմատվել, վերլուծվել են մանրամասն կերպով միմյանց հետ: Ըստ այդմ հոդվածում կիրառվել են պատմահամեմատական համադրական վերլուծական, պատմաքննական մեթոդները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մուհամմադ մարգարեի մահից հետո Աբրահամ պատրիարքը քառասուն հայ վանականների հետ դիմում է Ալի իբն Աբու Տալիբ խալիֆային, որ վերահաստատի Մուհամմադ մարգարեի պայմանագիրը: Ըստ մատենագիրների՝

այս դեպքը տեղի է ունեցել Օմարի՝ Երուսաղեմի գրավելուց առաջ (**Krikorian G., 2002**): Երբ Օմարը գրավեց Երուսաղեմը, քաղաքի հույն պատրիարք Սոֆրոնիոսի եղբայր Պետրոսը ապահովության գիր խնդրեց Օմար խալիֆայից՝ հարկ վճարելու պայմանով: Այդ պայմանագրով ապահովություն էր տրվում քաղաքի բնակիչներին, նրանց ունեցվածքին, եկեղեցիներին (**Krikorian G., 2002**): Երուսաղեմի հայ բնակիչներն էլ իրենց հերթին, Օմարին ներկայացրին Մուհամմադի պայմանագիրը և նա համոզվելով, որ պայմանագիրը իսկական է, հաստատեց այն՝ տալով նոր պայմանագիր: Վերջինս որոշակիորեն համընկնում է մուսուլմանական պատմագրության մեջ վկայված և Օմարի կողմից Երուսաղեմի բնակիչներին տրված պայմանագրի կետի հետ (**Tabari..., 1962**): Քաղաքից հեռացողներին ապահովվում էր անվտանգություն, քաղաքում մնացողներին՝ անձեռնմխելիություն: Հայ բնակիչները քաղաքից պետք է դուրս հանեին հույն ավագաններին ու լրտեսներին: Պայմանագրում նշվում է Գրիգոր Ուռհայեցու անունը, որը այդ ժամանակ հայոց պատրիարքն էր (**Kashishian A., 2009**): Այս ամենը գալիս է ևս մեկ անգամ ապացուցելու, որ նվաճող արաբը զերծ չէր մարդասիրության դրսևորումից, արաբի հիմնական նպատակն ավերածությունն ու ջարդը չէր, մի երևույթ, որ մենք տեսնում ենք մի քանի դար ուշ՝ թաթար-մոնղոլների նվաճումների ժամանակ: Միջնադարյան նվաճող արաբին հատուկ էր երդմանը հավատարիմ մնալու նախնյաց «ասպետական պատվի կոդեքսը», որով հպարտանում էին անցյալում ավազուտների ու դաժան բնական պայմաններում ապրող արաբական ցեղերը:

Բացի վերոհիշյալ պայմանագրերից, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Մայր Դիվանում պահպանվում է քաղաքի հայ բնակչությանը Օմարի անունով տրված ևս մի հրովարտակ, որն իր բովանդակությամբ, բառային ձևակերպումներով նմանություններ ունի Երուսաղեմի հայկական համայնքի Մուհամմադ մարգարեի անունով տրված պայմանագրի հետ:

Հրովարտակում հիշատակվում է, որ հիջրայի 15թ. (638թ.) քաղաքի հայ համայնքի ներկայացուցիչները Օմարին են ներկայացրել Մուհամմադ մարգարեի՝

իրենց տրված ապահովության գիրը և խնդրեց նրանց, որ իրենց իրավասության տակ շարունակեն գտնվել մի շարք սրբավայրեր, ինչպես նաև՝ իրենց հավատակից հետևորդների՝ եթովպացիների, ղպտիների և ասորիների սեփականությունները:

Նրանց խնդրանքը Օմար խալիֆան հաստատում է իր հրովարտակով՝ շնորհելով նրանց հավատարմության և անվտանգության ուխտ բոլոր մուսուլմանների անունից: Պայմանագրում առկա՝ Երուսաղեմի հայ համայնքի իրավունքներին, հարկային պարտականություններին, մուսուլմանների հետ փոխհարաբերությունների խնդրին վերաբերվող բոլոր պայմանները հիմնականում համընկնում են Մուհամմադի անունով Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Դիվանում պահվող պայմանագրի պայմանների հետ: Նշվում է, որ ով փոխի վերոհիշյալ պայմանները, անարդար կլինի Ալլահի նկատմամբ, ապստամբած կլինի Նրա Մարգարեի նկատմամբ և կգրկվի Նրա պաշտպանությունից: Ընդ որում, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Դիվանում պահվող այս ձեռագիրը համար չունի սակայն նրա արաբերեն տարբերակը առկա՞ծ Ա. Քեշիշյանի գրքում (**Kashishian A., 2009**):

Մուսուլմանները պիտի հավատարիմ լինեին այդ ուխտին և կատարեին այն մինչև Ահեղ Դատաստանի օրը, «քանի դեռ ծովը կթրջի բուրդը, երկնքից անձրև կգա, գիշերը կլուսավորեն աստղերը, ոչ ոք չի կարող խզել այն»:

Օմարի կողմից Երուսաղեմը գրավվելուց հետո քաղաքի հայ եպիսկոպոսներն իրենց իրավունքներով և լիազորություններով հավասարվեցին հույների պատրիարքին և գրեթե կաթողիկոսական փոխանորդ էին Պաղեստինի ու Ասորիքի մեջ՝ Եգիպտոսի սուլթանութեան հպատակ գաւառայ վրայ (**Օրմանյան Մ., 2001**):

Եվ այսպես, 1187թ. Երուսաղեմը գրավվեց Սալահ ադ- Դինի կողմից, որի մասին մուսուլմանական պատմագրության հետ վկայում են նաև հայ պատմագիրները (**Կիրակոս Գանձակեցի, 1982**): Ի դեպ, Սալահ ադ-Դինի հայրը՝ Այյուբը ծնունդով սերել է Դվինի քրդերից: Հայ հնագետ-պատմաբան Անուշավան

Տեր-Էպպեյանը, հիմնվելով իր կողմից կատարված դրամագիտական հետազոտությունների վրա, պնդում էր, որ Սալահ ադ-Դինի հայրը Անիի Բագրատունիների տոհմից էր, և որ նա սերել է հայերից ու քրդերից (**Էպպեյան Ա., 1981**): Մտնելով Երուսաղեմ՝ Այյուբյան սուլթանը հաշտության պայմանագիր կնքեց քաղաքի բնակչության հետ պայմանով, որ 40 օրվա ընթացքում հեռանան քաղաքից, իսկ նրանց եկեղեցիները դարձրեց տաճարներ: Այնտեղ արդեն չէին լսվում հույն եկեղեցականների օրհներգությունները, այլ միայն հայերն ու մյուս արևելյան քրիստոնյաները կշարունակեին Աստվածորդու հարության ու թաղման տեղի մեջ պաշտամունքներ կատարել, և շարականների հրաշալի երգեցողությունները Գողգոթայի եկեղեցու գմբեթի տակ կհնչեին (**Krikorian G., 2002**): Երբ Սալահ ադ-Դինը մտավ Երուսաղեմ, քաղաքի հայոց առաքելական աթոռի գահակալն էր Աբրահամը (1180-1191), որը մի քանի հայ բարձրաստիճան հոգևորականների հետ ուղևորվեց սուլթանի մոտ՝ իր հպատակությունը հայտնելու նրան և ներկայացնելու նաև Մուհամմադ մարգարեի, Ալի իբն Աբու Տալիբ և Օմար իբն ալ-Խատտաբ խալիֆաների հավատարմագրերը՝ տրված Երուսաղեմի հայկական համայնքներին, որոնցով ապահովություն էր տրվում հայ բնակիչների գույքին, անձերին և եկեղեցիներին: Սալահ ադ-Դինը, կարդալով վերոհիշյալ հրովարտականքը, առանձին հրովարտակով վերահաստատեց դրանք: Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Դիվանում պահպանվում են Սալահ ադ-Դինի անունով երկու տարբեր պայմանագիր՝ տրված քաղաքի հայ բնակիչներին, որոնք ուսումնասիրվել են մեր կողմից: Դրանցից մեկը գրված է կենդանական ծագման մագաղաթի վրա՝ սոսնձված կանաչ ատլասի կտորին, այն համարակալված է: Այդ պայմանագրի հայերեն թարգմանությունը առկա է Երուսաղեմի պատմության գիտակներ Տ. Սավալանյանի և Ա. Տեր-Հովհաննեսյանցի աշխատություններում (**Սավալանյան Տ., 1931; Հովհաննեսյանց Ա., 1890**), իսկ անգլերեն թարգմանությունը՝ Ս. Դադոյանի գրքում (**Dadoyan S., 2013**):

Այս պայմանագրով հաստատվում էին Սալահ ադ-Դինի կողմից Մուհամմադ մարգարեի, Ալի և Օմար խալիֆաների՝ հայերին տրված առանձնաշնորհումները, նրանց իրավունքները քաղաքի մի շարք սրբավայրերի նկատմամբ, ինչպիսիք են Ս. Հովհաննես եկեղեցին, Սիոնի և Ձիթենյաց վանքերը, Քրիստոսի բանտ կոչվող եկեղեցին, Բեթղեհեմի, Նաբլուսի, Գողգոթայի եկեղեցիները, որոնց համար վեճեր չպետք է լինեին քաղաքի հայ և այլ քրիստոնյա հոգևորականների միջև: Խոստացվում էր անվտանգություն բնակիչներին, որտեղ էլ որ լինեին, ծովում, թե ցամաքում, լեռներում թե քարանձավներում (**The Covenants of the prophet Muhammad, 2023**): Ապահովություն էր տրվում նաև եթովպիացիների, ղպտիների և ասորիների սեփականություններին: Պայմանագրով սահմանվում էին հայ քրիստոնյաների հարկային պարտավորությունները, նրանց փոխհարաբերությունները մուսուլմանների հետ՝ նրանց դեմ պատերազմի դեպքում, մուսուլմանի հետ քրիստոնյա կնոջ ամուսնության դեպքերը և այլն: Այն գրված է ռաջաբ ամսի 20-ին հիջրայի 583 թ. (1187 թ.) (**Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Դիվանի He//156 ձեռագիր**): Երուսաղեմի Դիվանում պահվող Սալահ ադ-Դինի անունով քաղաքի հայ բնակչությանը տրված մյուս պայմանագիրը գրված է հին թղթի վրա. հիշատակվում է, որ հիջրայի 583 թ. (1187թ.) հայ բարձրաստիճան հոգևորականները սուլթանին ու նրա մերձավորներին ներկայացրին հայ բնակիչներին Մուհամմադ մարգարեի, Ալի և Օմար խալիֆաների կողմից շնորհած հրովարտականքները և խնդրեցին ողորմածություն և բարերարություն սուլթանի կողմից, որ իրենից իրավասության տակ գտնվեն քաղաքի մի շարք սրբավայրեր, ինչպես նաև ասորիների, ղպտիների և եթովպացիների սեփականությունները Երուսաղեմում: Շեշտվում է, որ քանի դեռ իսլամը հաստատուն է և հավատը՝ անհրաժեշտ, այս ուխտն ու պայմանագիրը պարտադիր է բոլոր մուսուլման սուլթանների, կառավարիչների և բնակչության համար: Այս պայմանագիրը իր պայմանների շարադրմամբ, բովանդակությամբ նմանություններ ունի վերոհիշյալ պայմանագրի հետ, որոնք վերաբերում են մուսուլմանների պարտավորություններին: Հայ բնակչության

պայմաններում չի խոսվում հայ քրիստոնյաների հարկային պարտավորությունների մասին մուսուլմանների նկատմամբ: Վերջում բերվում են վկաների անունները, որոնք չեն համընկնում Սալահ ադ- Դինի անունով առաջին պայմանագրի հետ: Այս բոլոր պայմանագրերը վկայում են Այյուբյան հարստության հիմնադիրի՝ հայերի նկատմամբ ունեցած բարեհաճ վերաբերմունքի մասին (**Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Դիվանի Խժ/126 ձեռագիր**):

Եվ Սալահ ադ- Դինի անունով պայմանագիրը հետագա դարերում հսկայական դեր է խաղացել ամրագրելու հայոց իրավունքները Երուսաղեմի մի շարք սրբավայրերի նկատմամբ, որոնք հիշատակված են պայմանագրում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով, կարող ենք ասել, որ հայերը Երուսաղեմում բնակվել են դեռևս քրիստոնեության հաստատման վաղնջական ժամանակներից, երբ հայ ուխտավորները այցելել են Երուսաղեմ, կառուցել վանքեր ու եկեղեցիներ, որի վկայությունն է 7-րդ դարում Անաստաս վարդապետի կազմած Երուսաղեմի 70 վանքերի ցուցակը:

Մուհամմադ մարգարեի՝ Երուսաղեմի հայոց պատրիարք Աբրահամին տրված հրովարտակով հայկական համայնքի իրավասության տակ անցան մի շարք քրիստոնեական սրբավայրեր, որով էլ հաստատվեց հայոց աներկբա իշխանությունը դրանց վրա: Այս պայմանագիրը նախադեպ հանդիսացավ հետագա մուսուլման խալիֆաների ու սուլթանների համար՝ անվերապահորեն ճանաչել Երուսաղեմում հայկական համայնքին տրված պայմանագիրը արաբ-հայկական շփումների ամենավաղ ապացույցն է և մատնանշում է հայերի՝ մուսուլմաններ հետ փոխհամաձայնության գալու առաջին փուլը:

Արաբական արշավանքների նախօրյակին Երուսաղեմի հայ հոգևորականությունը կայուն դերակատարում ուներ քաղաքի կայնքում, նրա իրավասության տակ էին գտնվում մի շարք եկեղեցիներ, և այս փաստը աննկատ չմնաց արաբ նվաճողների կողմից: Օմար իբն ալ- Խատտաբ խալիֆայի՝

Երուսաղեմի հայկական համայնքին շնորհած պայմանագրով վերահաստատվեցին հայոց բոլոր իրավունքները մի շարք սրբավայրերի նկատմամբ: Քաղաքի հայ եպիսկոպոսներն իրենց իրավունքներով հավասարվում էին հույների պատրիարքին և գրեթե փոխարինում էին կաթողիկոսներին Պաղեստինում և Ասորիքում:

Այյուբյան հարստության հիմնադիր Սալահ ադ- Դինի՝ Երուսաղեմի հայկական համայնքի շնորհած պայմանագիրը, որը Մուհամմադ մարգարեի, Ալի իբն Աբու Տալիբ և Օմար իբն ալ- Խատտաբ խալիֆաների վերահաստատումն է, ձեռք բերեց պատմական մեծ կենսունակություն՝ ապահովելով հայ համայնքի խաղաղ կեցությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբգարյան Գ. (1997)**, Հայերը Շիլտերգերի ուղեգրությունում, Առանձնատիպ, Բանբեր Երևանի համալսարանի, №2(92), Երևան, Երևանի պետհամալսարանի հրատ., էջ 106-110:
2. **Աղավնունի Մ. (1931)**, Հայկական հին վանքեր և եկեղեցիներ Սուրբ Երկրին մեջ, Երուսաղեմ, Սրբոց Հակոբեանց հրատ.:
3. **Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Դիվանի արաբատառ ձեռագրեր** № Hc// 131, Hc//156, Hc. 126:
4. **Էպեան Ա. (1981)**, Հայության անձանոթ իր երկրորդ կայսրությունը, շահ էլ Արման, Բեյրութ, «Մշակ» հրատ.:
5. **Կիրակոս Գանձակեցի (1982)**, Հայոց պատմություն, առաջաբանը՝ Վ. Առաքելյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
6. **Հովհաննեսյանց Ա. (1890)**, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղեմի, Յերուսաղեմ, հատ. 1, Սրբոց Հակոբեանց հրատ.:
7. **Սավալանյան Տ. (1931)**, Պատմություն Երուսաղեմի, Երուսաղեմ, առաջաբանը՝ Մ.Նշանեանի, հատ.1, Երուսաղեմ, Սրբոց Հակոբեանց հրատ.:

8. **Օրմանյան Մ. (2001)**, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչո մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հատ. 2, Էջմիածին, Մայր աթոռ Ս. Էջմիածնի հրատ.:
9. **Azaria V. (1984)**, The Armenian Quarter of Yerusalem, Urban life behind monastery walls, London, Los Angeles, University of Caluifornia Press ed:
10. **Dadoyan S. (2013)**, The Armenians in the Medieval Islamic World: Paradigms of interaction Seventh to Fourteenth Cenmtuties. Vol 2, New Brunswick (U.S.A.) and London (U.K.), Trans action Publishers ed:
11. **Kashishyan A. (2009)**, Al-Arman fi al- Quds mundhu 2000 am. Al Turath al-Arabi, Dimashq, Itihad al-Kuttabi al-Arab ed:
12. **Krikorian G. (2002)**, Though the Eye of an Armenian Needle Antelias: Lebanon, Armenian Catholicate of Cilicia ed.:
13. **Sher A. (1918)**, Historie Nestorienne Chronique de Seert, seconde partie (II), Paris, Editions Brepols/ Belgique.
14. **Tabari Ibn Ya' afar Muhammad Yarir. (1962)**, Tariqh al- rusul waal- muluk, II, al- Kahira, Tiba Dar al-maarif.
15. **The Covenants of the prophet Muhammad (2023)**. Fromshared historical memory to peaceful Existance, Ibrahim Muhammad Yein and Ahmed El-Wakil Tailor and Francis e Books ed. www.taylorfrancis.com

REFERENCES

1. **Abgaryan G. (1997)**, Hayery' Shiltbergeri owghegrowt'yownowm /Armenians in Shiltberger's travellnotes/, Special type, Banber of Yerevan University, 2(92), p.106, Yerevan, Yerevan State University Publishing House.
2. **Aghavnuni M. (1931)**, Haykakan hin vanqer ev ekegheciner Sowrb Erkrin mej /Ancient Armenian monasteries and churches in the Holy Land/, Yerusalem, Srbots Hakobeats Publishing House:

3. **Erowsaghemi Hayoc Patriarqowt'yan Divani arabatar' d'er'agrer /Arabic manuscripts of the Armenian Patriarchate of Yerusalem/,** № Hc//131, Hc //156, Hc.126.
4. **Epéyan A. (1981),** Hayowt'yan anc'anut' ir erkrord kaysrowt'yowny' /The second empire unknown to Armenians/, shah el Arman, Bairut, "Mshak" Publishing House:
5. **Khirakos Gandzaketsi (1982),** Hayoc patmowt'yown /History/, foreword. V.Arakhelyan, Erevan, "Sovetakan grogh" Publishing House:
6. **Hovhannesyants A. (1890),** Jhamanakagrakan patmowt'iwn S. Erowsaghemi /Chronological History of Yerusalem/, vol1, Yerusalem, srbot Hakobeants Publishing House.
7. **Savalanyan T. (1931),** Patmowt'yown Erowsaghemi /History of Yerusalem/, forword M. Nshanean, vol 1, Yerusalem, Srpots Hokobeants Publishing House.
8. **Ormanian M. (2001),** Azgapatowm. Hay owghghap'ar' ekeghecoy ancqery' skizbe'n minchr mer o'rery' yarakic azgayin paraganerov patmowac' /History of nation. The events of the Armenian Ortodox church from the begining to the present days are told with related national circumstances/, vol2, Etchmiadzin, Mother See of Holy Etchmiadzin Publishing House.
9. **Azaria V. (1984)** The Armenian Quarter of Yerusalem, Urban life behind monastery walls, London, Los Angeles, University of Caluifornia Press Publishing House.
10. **Dadoyan S. (2013),** The Armenians in the Medieval Islamic World: Paradigms of interaction Seventh to Fourteenth Cenmtuties. Vol 2, New Brunswick (U.S.A.) and London (U.K.), Transaction Publishers ed..
11. **Kashishian A.(2009),** Armenians in Yerusalem , since 2000 year. The legacy of the Arabs, Damascus, Arab writers union ed..
12. **Krikorian G. (2002),** Though the Eye of an Armenian Needle Antelias: Lebanon, Armenian Catholicate of Cilicia ed..

13. **Sher A. (1918)**, Historie Nestorienne Chronique de Seert, seconde partie (II), Paris, Editions Brepols/ Belgique.
14. **Tabari Ibn Ya' afar Muhammad Yarir. (1962)**, History of prophets and kings, vol 2, Kahira, Hous of science ed..
15. **The Covenants of the prophet Muhammad (2023)**, Fromshared historical memory to peaceful Existance, Ibrahim Muhammad Zein and Ahmed El-Wakil, Tailor and Francis e Books ed. www.taylorfrancis.com

Gayane Mkrtumyan

The covenant granted by Salah ad-Din to the Armenian community of Jerusalem

Conclusion

Keywords and expressions: *Salah ad-Din, Sultans of Ottoman Empires, Armenian community of Yerusolim, the covenant of peace, Arab-Armenian relations, livesafety, Allahs protection, rights of Armenians, sanctuaries of Yerusalem, Armenian patriarch.*

In this article was studied the covenant given to the Armenian community of Yerusalem by Salah ad- Din, the founder of the Ayyubid dynasty (1171-1193), which is based on the agreements with the Armenian population of the city in the names of Prophet Muhammad and Caliph Omar ibn al- Khattab. The article presented how this covenant was recognised and as an authoritative document reaffirmed by the Muslim rulers of different eras and the Sultans of Ottoman Empire, which not only protected the safe existence of Armenian community of Yerusolim, but also guaranteed the Armenian rights to a number of sanctuaries of the city, which for a long time were a subject of dispute between Armenian and other Christian communities. In the article, the Arabic manuscripts with the names of the Prophet Muhammad and Caliph Omar ibn al-Khattab kept in the Divan of the Armenian Patriarchate of Yerusalem were studied in detail by combining a series of studies and works related to the theme, which are available in the Armenian bibliography. In the article the Arabic handwritten

covenant by Salah ad-Din to the Armenian community of Yerusalem was given Key attention, in two versions, the content of which was analysed by us, and the second version of that document was translated into Armenian. That covenant reaffirmed vows given to the Armenian community by the prophet Muhammad and Caliph Omar ibn al-Khattab, which guaranteed the safe existence of the Armenian community in the Yerusalem. This treaty in later centuries by being accepted by Ottoman Sultans, ensuring the peaceful life of the Armenian community.

Гаянэ Мкртумян

**Грамота дарованной Салах ад-Дином
армянской общине Йерусалима
Заключение**

Ключевые слова и выносы: Салах ад Дин, султаны Османской империи, армянская община Йерусалима, мирный договор, армяно- арабские отношения, безопасность жизни, защита Аллаха, права армян, святыни Йерусалима, патриарх Йерусалима.

В этой статье было изучено грамота дарованной основателем Аййубидской династии Салах ад-Дином (1171-1193) армянской общины Йерусалима, который основан на договорах данных армянскому населению города по имени Пророка Мухаммада и халифа Омар ибн ал- Хаттаба. В статье было предъявлено как этот договор был признан авторитетным документом и подтверждён мусульманскими властями разных эпох и султанами Османской империи, что защищало не только благополучное существование армянской общины Йерусалима, но и гарантировало права армян на ряд святыни города, которые уже давно были предметом споров между армянской и другими христианскими общинами. В статье подробно изучены арабские рукописи, написанные от имени Пророка Мухаммада, Халифа Омар ибн аль-Хаттаба, хранящихся в Диване Армянского Патриархата в Иерусалиме, в сочетании исследований и работ в армянской библиографии связанных с этой темой. В статье особое внимание уделено арабскому рукописному договору данному Салах ад-Дином армянской общине Иерусалима в двух вариантах, содержание первого из них нами проанализировано, а второй вариант этого документа

переведен нами на армянский язык. По этому договору были подтверждены заветы данные армянской общине Пророком Мухаммедом и Омаром ибн аль-Хаттабом, которые гарантировали безопасное существование армянской общины в Иерусалиме. Этот договор приобрело большую историческую жизнеспособность в последующие века, будучи подтверждено османскими султанами, обеспечив мирную жизнь армянской общины.

Գայանե Մկրտումյան – Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները՝ միջնադարյան արաբական պատմագրություն և մշակույթ, հայ արաբական հարաբերություններ: Հեղինակ է շուրջ 36 հոդվածի, մեկ մենագրության: gmkrtumyan@ysu.am

Gayane Mkrtumyan - PHD in Historical sciences, Associate professor of the Chair of Arabic Studies of the Faculty of oriental studies at YSU. Scientific interest: Medieval Arabic historiography and culture, Armenian - Arab relationships. gmkrtumyan@ysu.am

Гаяне Мкртумян - Кандидат исторических наук, доцент кафедры арабистики, факультета востоковедения ЕФУ. Сфера научных интересов: средневековая арабская историография и культура, армянско-арабские отношения. Автор около 36 статей, одной монографии. gmkrtumyan@ysu.am

Խմբագրություն է ուղարկվել 16.03.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 01.04.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ.